


Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2017 թվականին (տարեկան վերլուծություն)

Անշարժ գույքի շուկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2000 թվականից անշարժ գույքի քաղաքացիական շրջանառության գործընթացի ակտիվացման վրա շարունակում են էական ազդեցություն ունենալ հանրապետությունում.

- քաղաքաշինական և ներդրումային ծրագրերի իրականացումը,
- օրենսդրական դաշտի կատարելագործումը,
- գործարքների իրականացման ծառայությունների ժամկետների կրճատումը,
- գործավարության և գրանցման փաստաթղթերի պարզեցումը,
- ՀՀ հողային օրենսգրքից բխող նորմատիվ իրավական ակտերի ընդունումը,
- ինքնակամ կառույցների օրինականացումը,
- անշարժ գույքի շուկայի մասնակիցներից՝ ռիելթորների, անշարժ գույքի գնահատողների, տեղագրական քարտեզագրման և հողաշինարարական աշխատանքներ իրականացնողների որակավորման գործընթացի իրականացումը:


2006-2017 թվականների կտրվածքով, հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխություններն ունեն հետևյալ տեսքը.



2017 թվականին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը՝ 186585 միավոր, 2016 թվականի համեմատ աճել է 7.5 %-ով կամ 13017 միավորով, այդ թվում Երևանում՝ 8.7 %-ով կամ 5472 միավորով, իսկ մարզերում՝ 6.8 %-ով կամ 7545 միավորով:


2016-2017 թվականներին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների շարժընթացներն ու միտումներն ունեն հետևյալ տեսքը.

Անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակների փոփոխման դինամիկաների համադրումը




2017 թվականի ընթացքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ընդհանուր քանակի 30.0 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Գործարքների ընդհանուր քանակի 36.7 %-ը գրանցվել է Երևան քաղաքում: Անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում մեծ տեսակարար կշիռ ունեն օտարման գործարքները՝ 28.0 %:

2017 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2017 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 52275 օտարման գործարքների 74.3 %-ը կազմել է առուվաճառքը, 25.4 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների 39.3 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 37.5 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2017 թվականին անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2016 թվականի համեմատ, աճել է 11.8 %-ով:

2017 թվականին Երևան քաղաքում անշարժ գույքի 15722 առուվաճառքի գործարքի 64.4 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում, 2016 թվականի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 23.7 %-ով:

2017 թվականին Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)	
	2016թ	2017թ
Կենտրոն	428100	445800
Արաբկիր	357200	345800
Քանաքեռ-Զեյթուն	283100	270600
Նոր Նորք	254200	237000
Ավան	261700	251500
Էրեբունի	252400	240100
Շենգավիթ	257700	244600
Դավթաշեն	276800	257900
Աջափնյակ	251000	234200
Մալաթիա-Սեբաստիա	244100	233800
Նուբարաշեն	157400	157100
Միջինը Երևանում	274900	265300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները, 2016 թվականի համեմատ նվազել են 3.5 %-ով:

2017 թվականին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 4225 բնակարան, որոնց քանակը, 2016 թվականի համեմատ աճել է 12.3 %-ով:

2017 թվականին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առավաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, հետևյալ շուկայական միջինացված գները.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		2016թ	2017թ
Արագածոտն	Աշտարակ	116100	108100
	Ապարան	58500	59000
	Թալին	66800	63200
Արարատ	Արտաշատ	98900	93550
	Մասիս	115800	104300
	Վեդի	101700	93200
Արարատ	Արարատ	77500	78100
	Վաղարշապատ	154200	132200
	Արմավիր	121200	102100
Արմավիր	Մեծամոր	87600	76100
	Սևան	99400	84600
	Գավառ	60600	54300
Գեղարքունիք	Մարտունի	107700	107200
	Վարդենիս	45300	45900
	Ճամբարակ	28800	28800
Կոտայք	Վանաձոր	88600	82800
	Ստեփանավան	74800	69400
	Սպիտակ	99900	92000
Լոռի	Ալավերդի	55800	50500
	Տաշիր	47400	47400
	Թումանյան	11000	11000
Լոռի	Շամլուղ	8000	8000
	Ախթալա	20500	26000
	Աբովյան	155100	151600
Կոտայք	Նոր Հաճն	128550	121700
	Բյուրեղավան	108200	96700
	Եղվարդ	109900	106600
Կոտայք	Հրազդան	63900	58150
	Ծաղկաձոր	292400	289500
	Չարենցավան	85500	76300
Շիրակ	Գյումրի	109400	94300
	Արթիկ	67300	67250
	Մարալիկ	41100	41800
Սյունիք	Գորիս	123800	124500
	Կապան	95200	96100
	Սիսիան	92200	90300
Սյունիք	Մեղրի	83100	88200

	Քաջարան	94900	97800
	Դաստակերտ	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95100	92500
	Եղեգնաձոր	126300	122300
	Ջերմուկ	113200	103100
Տավուշ	Դիլիջան	115500	110700
	Իջևան	118600	113200
	Բերդ	60500	61400
	Նոյեմբերյան	50400	51100
	Այրում	31900	31900

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, 2017 թվականին բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ² մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի համեմատ նվազել են 5.0%-ով:

2017 թվականին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 5055 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևան քաղաքում՝ 1505, մարզերում՝ 3550: 2016 թվականի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքի քանակն աճել է 19.3 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ 22.3 %-ով, իսկ մարզերում՝ 18.1 %-ով :

2017 թվականին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Վարչական շրջաններ	Միջին գները(դրամ)	
	2016թ	2017թ
Կենտրոն	476200	476300
Արաբկիր	383100	381300
Քանաքեռ-Զեյթուն	295100	285900
Նորք-Մարաշ	319300	304600
Ավան	270600	264100
Էրեբունի	239800	235600
Շենգավիթ	255000	235500
Դավթաշեն	276100	270300
Աջափնյակ	250100	243000
Մալաթիա-Սեբաստիա	238100	235300
Նուբարաշեն	150800	150200
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286700	280200

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2017 թվականին անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի համեմատ, նվազել են 2.3%-ով::

2017 թվականին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության

արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)	
		2016թ	2017թ
Արագածոտն	Աշտարակ	136200	132100
	Ապարան	60050	54000
	Թալին	69250	66900
Արարատ	Արտաշատ	100100	97900
	Մասիս	115100	111500
	Վեդի	102300	93500
	Արարատ	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	150100
	Արմավիր	107000	102000
Գեղարքունիք	Սևան	95950	93200
	Գավառ	57100	54800
	Մարտունի	96200	95300
	Վարդենիս	41100	41150
	Ճամբարակ	31100	31600
Լոռի	Վանաձոր	100900	99100
	Ստեփանավան	91200	85200
	Սպիտակ	114000	109800
	Այվերդի	50300	50500
	Տաշիր	51900	46800
	Թումանյան	12000	12000
	Շամլուղ	14000	14000
	Ախթալա	30000	30000
Կոտայք	Աբովյան	157300	156100
	Նոր Հաճն	129800	127200
	Բյուրեղավան	120500	112500
	Եղվարդ	116100	110800
	Հրազդան	82600	73850
	Ծաղկաձոր	305000	301300
	Չարենցավան	83000	80500
Շիրակ	Գյումրի	119300	117200
	Արթիկ	63400	61200
	Մարալիկ	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	128700
	Կապան	100700	101000
	Սիսիան	96500	96100
	Մեղրի	84600	87000
	Դաստակերտ	11610	11800
Վայոց ձոր	Վայք	90150	88450
	Եղեգնաձոր	116750	114600
	Ջերմուկ	131300	129600
Տավուշ	Դիլիջան	115600	114800
	Իջևան	123200	121000
	Բերդ	60100	57800
	Նոյեմբերյան	48300	48300
	Այրում	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2017 թվականին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գինը (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի համեմատ նվազել են 2.5%-ով:

Ընդհանուր առմամբ, 2017 թվականին հանրապետությունում օտարվել է 17601 միավոր (16752.08 հա) հող, որից Երևանում՝ 1190 միավոր (308.43 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 10076 միավոր (15629.59 հա), որից Երևանում՝ 128 միավոր (28.73 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 5175 միավոր (449.89 հա), որից Երևանում՝ 554 միավոր (27.99 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 1818 միավոր (154.02 հա), որից Երևանում՝ 467 միավոր (45.66 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 284 միավոր (344.31 հա), որից Երևանում՝ 36 միավոր (175.54 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 98 միավոր (90.02 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 144 միավոր (80.27 հա), որից Երևանում՝ 4 միավոր (27.30 հա),
- ջրային հող՝ 5 միավոր (0.77 հա),
- անտառային հող՝ 1 միավոր (3.21 հա) մակերեսով Երևանում:

2017 թվականին հանրապետությունում օտարված հողերից 14388 միավորի (14915.10 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 984 միավոր (94.67 հա), նվիրատվության գործարք՝ 3111 միավոր (1801.55 հա), որից Երևանում՝ 170 միավոր (212.66 հա) և փոխանակության գործարք՝ 102 միավոր (35.43 հա), որից Երևանում՝ 36 միավոր (1.10 հա):

Հանրապետությունում 2017 թվականին հողերի առուվաճառքի գործարքների քանակն, 2016 թվականի համեմատ, աճել է 8.0 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 4.6 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 16.2 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 68.8 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 7207.36 հա, որից 7123.23 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 25.8%-ը կամ 3709 գործարք (3199.49 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հողեր, որից Երևանում՝ 269 միավոր (8.66 հա), իսկ 73.3 %-ը կամ 10547 միավորը (11608.70 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 701 միավոր (65.60 հա): 2017 թվականին հանրապետությունում արձանագրվել է վարձակալության իրավունքի վաճառքի 132 գործարք (106.91 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2017 թվականին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		Հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		Հասարակական կառուցապատ. հողերի	
Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	
Երևան	0	0.00	6	0.97	98	2.76	165	4.93	83	17.42	26	11.37	363	19.37	227	31.35
Արագածոտն	299	783.05	20	1.21	46	3.91	66	4.44	1001	1184.88	2	0.01	244	29.87	17	1.48
Արարատ	230	483.42	18	4.62	114	8.27	74	2.71	1070	583.60	10	10.13	528	46.66	68	1.68
Արմավիր	88	259.46	15	13.52	20	1.67	47	1.48	1014	6863.77	15	3.79	604	62.17	32	0.93
Գեղարքունիք	79	75.85	24	7.48	120	12.76	147	17.22	708	418.06	16	2.69	164	19.32	37	3.98
Լոռի	50	85.15	16	3.35	66	0.71	122	6.66	614	451.49	5	1.15	77	8.42	45	1.89
Կոտայք	355	618.93	15	2.31	493	31.82	156	6.45	1280	726.15	16	8.49	711	59.42	100	7.44
Շիրակ	41	77.20	6	14.21	58	3.52	54	2.74	415	387.85	1	0.60	108	11.21	17	0.49
Սյունիք	29	36.97	14	3.57	42	0.66	28	2.38	193	203.40	4	1.52	97	7.55	24	1.28
Վայոց ձոր	154	516.37	9	2.43	29	2.03	34	1.32	139	254.25	2	0.48	48	4.59	21	0.74
Տավուշ	62	35.42	24	8.75	44	2.47	54	1.73	254	126.39	0	0.00	87	9.19	23	1.09
Ընդամենը	1387	2971.82	167	62.42	1130	70.58	947	52.06	6771	11217.26	97	40.23	3031	277.77	611	52.35

Ստորև ներկայացվում է 2017 թվականին պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյուն. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Արդյուն. օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի		Հասարակական կառուցապ. հողերի								բնակելի կառուցապ. (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապ. հողերի	
Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	Միավոր	Մակերեսը (հա)	
Երևան	168	3.69	4	0.96	73	0.93	91	1.80	101	4.96	0	0.00	2	0.01	25	1.82	74	3.13
Արագածոտն	7	0.21	2	0.18	2	0.02	3	0.01	416	723.28	291	713.93	18	1.03	44	3.89	63	4.43
Արարատ	35	4.10	4	3.27	13	0.16	18	0.67	379	366.84	208	355.33	14	1.35	101	8.11	56	2.05
Արմավիր	16	0.24	2	0.09	4	0.04	10	0.11	152	273.11	86	256.69	13	13.43	16	1.63	37	1.36
Գեղարքունիք	45	1.80	3	0.32	13	0.43	29	1.05	312	106.85	66	71.19	21	7.16	107	12.33	118	16.17
Լոռի	73	6.05	3	2.34	30	0.31	40	3.40	176	39.83	45	35.15	13	1.01	36	0.41	82	3.26
Կոտայք	104	2.28	2	0.55	80	1.59	22	0.14	900	624.78	340	586.48	13	1.77	413	30.23	134	6.30
Շիրակ	31	1.17	1	0.70	12	0.16	18	0.31	125	96.40	38	77.10	5	13.51	46	3.36	36	2.43
Սյունիք	29	1.42	1	1.23	24	0.09	4	0.10	82	41.61	27	36.41	13	2.34	18	0.58	24	2.28
Վայոց ձոր	6	0.16	0	0.00	2	0.01	4	0.15	218	521.96	152	516.35	9	2.43	27	2.02	30	1.16
Տավուշ	30	0.64	0	0.00	17	0.57	13	0.07	153	47.68	61	35.38	24	8.75	27	1.90	41	1.65
Ընդամենը	544	21.76	22	9.64	270	4.31	252	7.81	3014	2847.30	1314	2684.01	145	52.79	860	66.28	695	44.22

Հանրապետությունում 2017 թվականին արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 73 գործարք (287.80 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2017 թվականին հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն, 2016 թվականի համեմատ, աճել է 50.8 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 15.1

%-ով, իսկ մարզերում աճել է 54.8 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքի քանակն աճել է 62.0 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 55.5 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 26.8 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 95.9 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2017 թվականին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Եվազգային	Առավելագույն	Միջին			Եվազգային	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	242	572.78	40.1	2352.8	419.9	615	459.65	365.0	12000.0	3396.5
Ապարան	17	14.08	66.9	2453.0	307.8	33	21.15	86.5	2727.3	650.9
Թալին	29	126.99	37.6	400.2	122.7	214	515.05	93.6	5494.5	680.3
Ծաղկահովիտ	3	0.08	1540.0	2420.0	1963.3	79	172.47	79.5	1000.0	437.6
Արարատի մարզ										
Արտաշատ	121	86.75	70.6	4519.1	618.8	487	167.33	335.1	10833.3	2700.0
Մասիս	28	65.34	59.5	1437.5	226.2	190	100.06	200.0	11904.8	3397.6
Վեդի	59	203.24	17.8	9121.3	1260.0	373	312.08	207.0	10795.1	1985.2
Արմավիրի մարզ										
Արմավիր	28	47.88	61.2	2284.8	334.7	472	274.10	294.3	9090.0	1493.7
Բաղրամյան	38	135.94	70.9	2015.8	456.6	231	6347.49	90.6	2561.1	817.6
Վաղարշապատ	20	72.87	33.8	3190.0	731.9	291	171.58	444.4	11764.7	2065.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	3	2.68	185.1	331.7	236.1	358	109.40	199.8	1875.0	536.9
Ճամբարակ	16	10.18	287.6	17500.0	2107.2	13	11.24	60.5	953.3	350.8
Մարտունի	13	27.63	53.2	1591.0	357.0	25	4.47	51.1	2850.0	739.2
Սևան	7	4.75	172.5	2200.0	601.5	215	89.26	52.2	2134.8	366.3
Վարդենիս	27	25.96	118.2	1757.6	749.4	92	196.81	41.2	2575.1	358.3
Լոռու մարզ										
Ալավերդի	14	3.73	630.3	5000.0	2430.8	71	44.26	170.4	6424.2	545.5
Գուգարք	20	13.10	172.8	1606.3	1152.9	79	24.17	234.6	6065.9	817.0
Սպիտակ	4	1.84	163.5	1050.0	442.8	23	10.20	250.0	5555.5	657.5
Ստեփանավան	4	9.28	167.8	1455.4	700.5	90	75.83	90.6	1686.6	421.3
Տաշիր	3	7.20	506.0	536.5	516.2	333	278.60	45.3	1384.4	187.7
Կոտայքի մարզ										
Աբովյան	121	274.96	76.1	5783.3	445.1	493	164.15	279.3	11942.7	3936.8
Եղվարդ	137	182.09	67.5	4722.6	657.1	604	381.71	174.4	11971.8	2564.9
Հրազդան	82	129.44	80.9	3750.0	504.4	157	151.92	130.5	10256.4	1104.4
Շիրակի մարզ										
Ախուրյան	7	5.26	124.6	329.5	224.7	111	118.96	252.0	1693.1	714.9
Ամասիա						24	50.56	40.9	261.0	145.1
Անի	4	4.54	88.1	305.3	184.7	94	97.63	110.6	546.9	469.5
Աշոցք	2	0.04	7000.0	7000.0	7000.0	12	11.24	58.5	215.8	142.7
Արթիկ	25	67.26	47.2	1000.0	539.2	135	101.00	79.4	1428.6	550.8
Սյունիքի մարզ										
Գորիս						38	52.98	92.6	1023.2	691.4

Կապան	7	20.73	77.0	473.0	235.6	17	17.82	120.0	841.6	464.2
Մեղրի	5	1.78	1150.0	3740.0	1731.1	27	17.87	193.0	3000.0	851.5
Սիսիան	15	13.90	69.0	1127.5	219.4	103	110.92	46.3	1977.4	523.2
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	136	486.43	18.7	2607.2	251.3	87	209.47	125.0	10000.0	1834.3
Վայք	16	29.92	25.5	201.3	59.9	49	43.99	58.8	1430.7	644.2
Տավուշի մարզ										
Բերդ	4	1.51	217.5	360.4	307.8	87	22.77	213.3	3783.8	732.0
Իջևան	51	32.04	43.7	2400.0	492.2	36	13.26	267.5	9454.5	1645.0
Նոյեմբերյան	6	1.84	306.9	670.9	483.0	126	89.54	46.7	7368.4	1045.8

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծ լինելը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում է 2017 թվականին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	24	22951.0	137.5	4996.2	1869.4	181	182169.2	130.7	22200.0	2589.6
Ապարան	13	9832.8	256.0	3333.3	1050.9	26	39325.5	124.1	609.6	390.1
Թային	3	4812.0	151.2	235.0	193.1	23	42269.8	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ	4	1255.5	222.0	236.3	231.9	8	27874.0	60.0	214.3	95.0
Արարատի մարզ										
Արտաշատ	69	70212.4	357.0	1617.5	569.9	142	141974.8	173.9	7140.3	902.3
Մասիս	20	7189.2	666.7	6065.0	2342.4	259	195404.6	187.5	25000.0	1204.1
Վեդի	12	3671.0	155.5	2500.0	1119.2	122	124996.9	126.1	5000.0	663.6
Արմավիրի մարզ										
Արմավիր	13	14312.8	376.5	3528.0	1585.0	204	244128.8	131.6	9090.9	1216.1
Բաղրամյան						17	19062.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	3	1942.0	1367.6	7656.0	3101.5	371	347554.7	197.4	26528.4	1530.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	38	44456.2	51.8	193.8	123.1	25	29738.0	186.6	1084.3	683.4
Ճամբարակ	3	3051.8	102.4	369.3	191.9	11	10607.0	71.3	2286.2	147.0
Մարտունի	36	40624.0	112.6	377.1	220.9	84	87717.6	119.3	5000.0	277.3
Սևան	7	1684.5	241.8	1742.7	1162.3	20	25192.3	240.0	3110.4	349.8
Վարդենիս	23	33528.5	79.2	1470.0	562.2	22	38244.0	72.5	987.2	150.5
Լոռու մարզ										
Ալավերդի	10	1526.3	161.8	4200.0	2330.9	22	29307.2	114.3	1388.9	216.9
Գուգարք	24	1329.6	2105.4	4750.5	2481.4	28	26168.3	77.9	14083.3	1258.7
Սպիտակ						15	15928.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան	1	1180.0	580.8	580.8	580.8	8	7934.5	88.2	1666.7	176.0
Տաշիր	1	39.0	561.5	561.5	561.5	2	817.5	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	154	64045.3	245.8	9800.0	3046.2	382	307663.6	264.5	35353.5	1957.6
Եղվարդ	228	226939.4	210.8	5037.5	1242.1	284	249431.8	173.6	27000.0	2853.1
Հրազդան	31	11292.9	416.7	4976.4	2350.9	38	29565.6	117.7	34848.5	1317.5
Շիրակի մարզ										
Ախուրյան	26	8910.0	233.0	5232.6	1926.1	55	51979.7	113.6	18750.0	333.4
Ամասիա								45.3	274.7	72.0

Անի	1	1203.6	73.3	73.3	73.3	11	20144.7	67.9	180.6	217.5
Վշոցք						1	4727.0	40.8	144.0	65.0
Արթիկ	19	23506.7	122.1	2752.3	1052.6	39	34516.2	111.8	5000.0	217.2
Սյունիքի մարզ										
Գորիս						26	19744.1	112.2	1700.0	366.9
Կապան	13	3950.7	54.5	3200.0	1462.3	14	10406.3	67.9	2638.9	380.2
Մեղրի	2	138.5	840.0	900.0	870.0	14	10441.6	68.5	632.9	270.2
Սիսիան	3	1693.0	359.0	580.8	418.8	38	32415.0	123.5	875.0	263.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	24	19055.8	59.5	755.0	426.3	41	38789.9	96.7	7659.6	506.1
Վայք	3	1124.1	468.6	1050.0	760.9	6	5958.0	120.7	1448.3	250.9
Տավուշի մարզ										
Բերդ						16	11929.1	75.8	810.0	131.5
Իջևան	20	16042.9	48.9	3000.0	1664.6	59	63546.1	74.1	14423.1	480.2
Նոյեմբերյան	7	2989.0	110.0	2200.0	996.8	10	14793.8	125.0	1948.1	259.0

2017 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 9513 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 5.1 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքների 93.3 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից: 2017 թվականին անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2016 թվականի համեմատ, աճել է 25.7 %-ով:

2017 թվականին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 339 բնակարանի, 291 անհատական բնակելի տան, 3740 հասարակական նշանակության, 1698 արտադրական նշանակության օբյեկտի, 3356 հողի, 86 ավտոտնակի և 3 այգետնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2017 թվականին Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 62 վարձակալության գործարքների քանակը 2016 թվականի համեմատ մնացել է անփոփոխ:

2017 թվականին հանրապետությունում վարձակալված 33504.18 հա հողերից 7.21 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 33496.97 հա հողերից 31605.50 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 1504.58 հա արդյունաբերական օբյեկտների, 43.87 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 14847.96 հա, որից 14265.89 հա գյուղատնտեսական նշանակության:

2017 թվականին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 24325 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 13.0 %-ը: 2017 թվականին գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2016 թվականի համեմատ, աճել է 13.5 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.8 %), առանձնատների (22.4 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.7 %) և հողերի (7.9 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 14246 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2016 թվականի համեմատ, աճել է 25.3 %-ով:

2017 թվականին հանրապետությունում գրավադրվել է 6319.65 հա մակերեսով հող, որից 68.93 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողերի 81.4 %-ը կամ 5145.29 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 3.15 հա: Առավել մեծ

մակերեսով հողեր գրավադրվել են Արմավիրի մարզում՝ 3420.60 հա, որից 3405.95 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են:

2017 թվականին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 3313 գործարք, որից 2625-ը՝ Երևանում: Ընդ որում, հիփոթեքային գրավադրման գործարքների 78.3 %-ն իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 9.1 %-ն՝ անհատական բնակելի տների, 3.0 %-ը՝ հասարակական նշանակության օբյեկտների, 0.9 %՝ արտադրական նշանակության օբյեկտների, 0.3 %՝ ամառանոցների, 6.8 %-ն՝ ավտոտնակների և 1.6 %-ը՝ հողերի, այդ թվում 0.5 %-ը՝ գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ: 2016 թվականի համեմատ, հիփոթեքային գրավադրման գործարքների քանակն աճել է 93.5 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 2.3 անգամ, իսկ մարզերում՝ 24.2 %-ով:

2017 թվականին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 25801 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը 2016 թվականին համեմատ աճել է 15.4 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.8 %, իսկ քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (22.8 %):

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե